«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

Դաստիարակ՝ Գրետա Գրիգորյան

Մանկապարտեզ՝ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Մեծ Պարնու մանկապարտեզ» **ՀՈԱԿ**

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……..… 3

ԳԼՈՒԽ 1 Ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակություններիզարգացումը նախադպրոցական տարիքում

1.1 Սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական ունակությունների առանձնահատկությունները ……5

1.2 Երեխայի ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական

ունակությունների գործնեության կազմակերպման ձևերը……...……8

ԳԼՈՒԽ 2 Փորձարարական հետազոտություն ուղղված կրտսեր 2-րդ նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորմանը

2.1 Ինքնուրույնութան, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակություններին զարգացմանը նպաստող, թեմատիկ պլանավորում կրտսեր 2-րդ խմբում…….…...…11

Եզրակացություն……16

Գրականության ցանկ ……..……17

Ներածություն

Մանկական ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական ունակությունները վերջի ժամանակներում բավականին լայն քննարկման թեմա է դարձել: Արդեն 3 տարեկանում երեխաների մոտ կտրուկ աճում է մեծերից կախված չլինելու ձգտումը ինչպես գործողություններում, այնպես էլ ցանկություններում: Ժ.Ժ. Ռուսոն ասել է՝ «Երեխան ունի առանձահատուկ տեսնելու, մտածելու և զգալու իր ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով»[1]:

Թեմայի արդիականությունը. Սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման հարցը մինչ օրս համարվում է նախադպրոցական մանկավարժության արդի խնդիրներից: Արդիական է այն, թե ինչպես առավելագույն կերպով կազմակերպել ուսումնական գործընթացը նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորման ուղղությամբ: Նախադպրոցական տարիքը անձի ձևավորման սկիզբն է: Շատ հատկանիշներ որոնցից են՝ վարքը, բնավորության գծերը և այլ տարբեր հատկությունների զարգացման հիմքերը դրվում են հենց նախադպրոցական տարիքում: Նախադպրոցական տարիքում են սկսում ի հայտ գալ և ձևավորվել երեխայի բարոյական և կամային դրսևորումները, որոնց անմիջական ընթացքը նպատակաուղղված ուղղորդման կարիք ունի դաստիարակող մեծահասակների կողմից: Վերջին տարիներին այս հարցը գնալով դառնում է գիտնականների, ուսուցիչների և մանկավարժների մեծ ուշադրության առարկա:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և ներկայացնել սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների

[1] https://hanragitak.com/%D5%A1%D6%86%D5%B8%D6%80%D5%AB%D5%A6%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/

զարգացումը։ Մշակել թեմատիկ պլանավորում, որտեղ ավելի տեսանելի կլինի, նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնությունը, նախաձեռնողակա-նություն և ստեղծագործական ունակությունները։

Հետազոտական աշխատանքի ընթացքը և բաժինները՝

- Ներկայացնել սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական ունակությունների առանձնահատկությունները,
- ՈՒսումնասիրել երեխայի ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական ունակությունների գործնեության կազմակերպման ձևերը,
- Կատարել ինքնուրույնութան, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակություններին զարգացմանը նպաստող, թեմատիկ պլանավորում կրտսեր 2-րդ խմբում

հետազոտական աշխատանքը բաղկացած է՝ բովանդակությունից, ներածությունից, 2 գլուխներից և ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից։

Հետազոտական աշխատանքը կազմված է 17 համակարգչային էջերից։

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

1.1 Սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական ունակությունների առանձնահատկությունները

Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր, մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է, նաև անհատին հատուկ ու բնազդային հատկություններից մեկը, որին անձը ձգտում է ծնված օրվանից։ Ինքնուրույն՝ մյուսներից անջատ մարդ լինելու ընդգծված ցանկությունն ու զգացողությունը կտրուկ փոխում է երեխայի զարգացման սոցիալական իրադրությունը, քանի որ Էական են դառնում մեծահասակների հետ հաստատվող այն հարաբերությունները, որոնք պայմանավորված չեն կոնկրետ իրողութամբ, իրադրությունից դուրս են։ Եթե վաղ տարիքում «Մենք» սոցիալական իրավիճակում երեխայի զարգացման համար որոշիչ են իրադրային-ճանաչողական հարաբերությունները, ապա նախադպրոցական տարիքում՝ ինքնագիտակցության զարգացման հետ մեկտեղ ձևավորվում և բուռն զարգանում են երեխայի անձնային հարաբերություններ, որոնք, կարծես, հաստատում են նրա անկա-խությունը մեծահասակներից և դարձնում նրան ինքնուրույն մարդ։ Արտաիրադրային հարաբերությունների առկայությունը խոսում է «Մենք» կառույցի փլուզման մասին և ազդարարում զարգացման նոր փուլի սկիզբը։ Ֆիզիկապես առողջ երեք տարեկան երեխան ներքուստ ձգտում է ինքնուրույնության և իմացական ակտիվության, նա, իհարկե, կարիք ունի մեծահասակների օգնության, սակայն ուղղակի կախված չէ նրանցից։ Անկախության ներքին զգացողությունը երկակի է ընկալվում երեխայի կողմից՝ նա մի կողմից ուրախ է ինքնուրույնության փաստից, մյուս կողմից՝ անհանգստացած, քանի որ վստահ չէ սեփական կարողությունների մեջ և այնուամենայնիվ ձգտում է մեծահասակների հետ համագործակցության։ Նշված ներքին հակասությունը նախադպրոցականի զարգացման

հիմնական գործոնն է, շարժիչ ուժը: Երեխան ջանում է ճանաչել աշխարհը առանց մեծահասակների անմիջական մասնակցության և դիմում է նրանց միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Արտաքին աշխարհի ինքնուրույն ճանաչումը երեխան սկսում է սեփական մարմնի ուսումնասիրություններով, որին հաջորդում է այլ մարդկանց և նրանց հարաբերությունների զննումը: Սեփական մարմինն ու արտաքին տեսքը մանրակրկիտ ուսումնասիրելու արդյունքում, նախադպրոցականը հայտնաբերում է, որ տարբերվում է մյուսներից, որ մարդիկ ընդհանրապես տարբեր են: Մարդկանց և նրանց հարաբերությունները զննելով, երեխան փորձում է հաստատել սեփական ինքնությունը շրջապատող միջավայրում: Սեփական «Ես»-ի գիտակցումը, սեփական վարքագիծը հասկանալու և մյուսներին բացատրելու պատրաստականությունը, գնալով աճող հետաքրքրությունը հասարակական կյանքի հանդեպ, երեխայի մեջ ձևավորում է որոշակի ներքին դիրքորոշում, որը փորձարկվում և գիտակցվում է հասակակիցների միջավայրում: Մեծահասակների հետ համատեղ գործունեությունը կորցնում է իր նախկին գերակայող նշանակությունը և առաջնային են դառնում հասակակից ընկերների հետ հաստատվող հարաբերությունները:

Սների ստեղծագործական կարողությունը զարգացնելու կարևորությունը, նախաձեռնություն ցուցաբերելու, հորինելու և ցանկացած կրթական խնդիր լուծելու նրա կարողությունը ակնհայտ է բոլորի համար: Ստեղծագործության և ուսուցման գործընթացը փոխկապակցելով, ակնհայտորեն, մենք պետք է խոսենք այնպիսի պայմանների ստեղծման մասին, որոնք կնպաստեն բոլոր մարզված որակների և հակումների առաջացմանն ու զարգացմանը, որոնք սովորաբար առանձնացվում են որպես ստեղծագործ անհատականության բնորոշ հատկանիշներ: Դպրոցի արդյունավետությունը որոշվում է նրանով, թե որքանով է կրթական գործընթացն ապահովում աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացումը, նրանց նախապատրաստում հասարակության մեջ կյանքին:[2]:

[2] Ա.Ա.Մարության, Ա.Մ.Դալլաքյան- նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008, էջ 35

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից: Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել: Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից[3]:

Ինքնուրույնության և նախաձեռնողականության դաստիարակությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես է մեծահասակը ղեկավարում երեխայի գործունեությունը: Չի կարելի մեխանիկորեն վարժեցնել երեխայի ինքնուրույն գործելու ունակությունները: Նրա մեջ պետք է առաջացնել ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, իր առջև ծառացած խնդիրները ինքնուրույն լուծելու ցանկություններ: Այդ ցանկություններն իրագործելու համար անհրաժեշտ է որպեսզի երեխան յուրացնի իր համար մատչելի գործելու միջոցները, հնարները: Պետք է ստեղծել նաև այնպիսի իրադրություն, որ երեխան ձգտի ինքնուրույն հասնել դրված նպատակներին, ինչպես և սովորի իր առջև ինքնուրույն դնել որևէ նպատակ և լուծել առաջացած խնդիրը:

[3] https://bodylabvenera.ru/hy/church-holidays/vazhnost-razvitiya-tvorcheskih-sposobnostei-u-detei-razvitie/

1.2 Երեխայի ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական ունակությունների գործնեության կազմակերպման ձևերը

Նախադպրոցական մանկության տարիներին երեխաների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը ձևավորվում է տարբեր տիպի գործունեության ընթացքում՝ խաղայի, աշխատանքային, արդյունավետ, ուսումնական:

Խաղային գործունեություն.

Խաղը իրականության երևակայական արտացոլումն է: Այն աշխարհաճանաչման ուղի է, որի միջոցով երեխան կյանք է մտնում, հարստացնում իր զգայական փորձը, հարաբերություններ հաստատում մարդկանց հետ: Խաղալով երեխան կերտում է ինքն իրեն: Հարկ է նշել, որ նախաձեռնության, ինքնուրույնության, ակտիվության դաստիարակության գործում մեծ է ստեծագործական խաղերի դերը (սյուժետադերային, կառուցողական, խաղ-բեմակամացումներ, խաղ-փորձարկումներ): Վերջիններս համարվում են ամենաարդյունավետը ինտելեկտուալ նախաձեռնության, ստեղծագործելու կարողությունը զարգացնելու համար: Այս խաղերի ժամանակ, արդեն ավագ տարիքի երեխաները ինքնուրույն են որոշում խաղի ընթացքը, բաշխում դերերը, ընթացքում հայտնում կարծիք այս կամ այն հարցի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով էլ մանկավարժը պետք է անընդհատ ընդլայնի երեխաների պատկերացումները շրջապատի վերաբերյալ, հագեցնի նրանց նոր տպավորություններով:Ամեն մի խաղ, որը կապված է ինչ-որ բան ստելծելու, արարելու հետ, իր մեջ կրում է ինքնուրույնության տարրեր: Ահա թե ինչու երեխայի համար խաղալիք ընտրելիս, անհրաժեշտ է մտածել այն մասին, թե ինչ որակներ, ինչ հատկանիշներ այն կձևավորի երեխայի մեջ:

Արդյունավետ գործունեություն.

Մեծ է արդյունավետ գործունեության տարբեր ձևերի (նկարչություն, ծեփակերտում, կառուցողական աշխատանք, ապլիկացիա) նշանակությունը ինքնուրույնության դաստիարակության գործում: Երբ երեխան պատկերում է տարբեր

իրավիճակներ, շարժումներ, ծեփակերտում է տարբեր կերպարներ, նա ամեն ինչում նախաձեռնություն է ցուցաբերում: Այստեղ կարևոր է, որ մանկավարժը հաճախակի երեխաներին հնարավորություն տա ինքնուրույն ընտրել աշխատանքի թեման, նյութը, գույները, կոմպոզիցիոն լուծումները: Առարկայի ընկալումը գործնական ճանապարհով, ամրապնդվում է գիտակցության մեջ: Այս կամ այն առարկայի որակները, չափը, գույնը, դառնում են ոչ միայն առանձին, որոշակի առարկաների հատկանիշներ, այլ ընդհանրացվում են որպես տարբեր առարկաների բնորոշ: Երեխան արդեն կճանաչի և կանվանի այդ հատկանիշները անծանոթ առարկաների մեջ: Երախայի ուշադրությունը հրավիրելով պատկերվող իրադրությունների, մարդկանց, կենդանիների արտահայտչականության, բնորոշ մանրամասների, գույների գամմայի, ձևի վրա՝ նրան աստիճանաբար մոտեցնում ենք ընկալվածը տարրականորեն գնահատելու կարողությանը:

Ուսումնական գործունեություն.

Նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցումն իրականացվում է պարապմունքների միջոցով: Պարապմունքների ժամանակ երեխաների մոտ ձևավորվում են տարրական պատկերացումներ, ձեռք են բերում հմտություններ, կարողություններ: Տարբեր պարապմունքների ժամանակ լուծվում են ընդհանուր դիդակտիկ խնդիրներ:

Նախադպրոցականների ուսումնական գործունեության առանձնահատկություններից է նաև, որ այն սերտորեն կապված է խաղային գործունեության հետ: Ինքնուրույնության ինչպես նաև նախաձեռնության դաստիարակության ուղղությամբ, մի շարք պահանջներ են ներկայացվում նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնական գործընթացին.

- ինտելեկտուալ նախաձեռնություն
- հետաքրքրությունների շրջանակի հնարավոր ընդլայնում
- առաջարկվող ուսումնական նյութի բովանդակության բարդացումը խորացման և աբստրակտացման միջոցով
- դիվերգենտ մտածելակերպի զարգացում[4]:

[4] https://lib.armedu.am/article/9253

Հնարավորությունները առավելագույնի հասցնելու և երեխայի հաջող ստեղծագործական զարգացմանը խթան տալու համար անհրաժեշտ է կազմակերպել անհրաժեշտ պայմաններ.

1. Վաղ ֆիզիկական զարգացում. Ֆիզիկական գործունեությունը, որը սկսվում է երեխայի առաջին ամսից, առաջին քայլն է նախադպրոցական տարիքի երեխայի ստեղծագործական կարողությունների հիմքերը դնելու, այնուհետև մեծահասակների համար:

2. Ստեղծել միջավայր, որը գերազանցում է երեխայի զարգացմանը: Հնարավորության դեպքում երեխան պետք է շրջապատված լինի մի բանով, որը կխրախուսի նրան գործել ստեղծագործական մոտեցմամբ:

3. Բարդություն և առաջադրանքների քանակի ավելացում. Ցանկացած ունակություն զարգանում է հնարավորինս հաջող, եթե նշաձողը մշտապես բարձրացվի: Փոքր երեխաներին շրջապատող աշխարհի մասին սովորելու գործընթացը շատ ինտենսիվ է, և նրանք միշտ չէ, որ կարող են օգտագործել մեծահասակների փորձը:

4. Գործունեության ընտրության հարցում ավելի մեծ ազատության ապահովում. Թող երեխան ընտրի, թե ինչ է ուզում անել և որն է իր համար ավելի հետաքրքիր այս պահին:

5. Մեծահասակների օգնությունը աննկատ է և ողջամիտ: Երեխային տրված ազատությունը ոչ մի դեպքում չպետք է վերածվի ամենաթողության: Բացի այդ, դուք չպետք է հուշեք երեխային, թե որտեղ նա հավանաբար ինքնուրույն կմտածի այդ մասին: Ակնարկը արջի ծառայություն է մեծերի կողմից:

6. Հարմարավետ հոգեբանական կլիմա. Ընտանիքում ջերմ մթնոլորտը, մանկապարտեզում ընկերական հարաբերությունները երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման կարևոր նախապայման են[5]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր երեխա ունի ստեղծագործական ունակություններ, ցանկանում է լինել ինքնուրյուն և նախաձեռնող: Հենց անհատական-հոգեբանական հատկանիշներն են տարբերում մեկ մարդուն մյուսից: Այս անհատականության ձևավորումն այսօր ձեռք է բերում ոչ միայն տեսական, այլև գործնական մասով:

[5] https://bodylabvenera.ru/hy/church-holidays/vazhnost-razvitiya-tvorcheskih-sposobnostei-u-detei-razvitie/

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՐՏՍԵՐ 2-ՐԴ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

2.1 Ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակություններին զարգացմանը նպաստող, թեմատիկ պլանավորում կրտսեր 2-րդ խմբում

Խումբ - Կրտսեր 2-րդ

Ամսաթիվ – 13.12.2023

Միջավայրը- խմբասենյակ

Տեսակը – Ինտեգրված

Առարկա – Խոսքի զարգացում, ապլիկացիա

Թեմա – <<Նոր տարվա ցանկություն >>

Պարապմունքի տևողությունը – 20 րոպե

Վերջնարդյունք՝

- Կզարգանա նախաձեռնողականությունը,
- Կկատարեն ինքնուրույն աշխատանքներ,
- Կբացահայտեն սեփական ստեղծագործական ունակությունները։

Նպատակը ՝

- Նպաստել ինքնակազմակերպմանը, ինքնուրույն մտածելու կարողությանը,
- Բացահայտել ստեղծագործական երևակայությունը ,
- Զարգացնել նախաձեռնողականությունը,

- Իրականացնել խմբասենյակի տոնական ձևավորումը և ամանորյա բացիկի պատրաստումը, երեխաների նախաձեռնողականությամբ։

Խնդիրները՝

- Խոսքի միջոցով ճանաչել բնության երևույթները,
- Նախաձեռնելու և ստեղծագործելու ունակությունների զարգացում,
- Ինքնուրույն առաջնորդվելու կարողություն ։

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ ամանորյա պարագաներ ձևավորելու համար, գունավոր թուղթ, վրձին, յուղաներկ ապլիկացիայի համար։

Դասի ընթացքը՝

Խթանում

Սկիզբը սկսում ենք Համո Սահյանի <<Եղևնին>> բանաստեղծության ընթերցմամբ, բանաստեղծությունը ընթերցում ենք կրճատումներով։

Անտառից եկած կանաչ եղևնին
Հիշում է կանաչ իր ընկերներին…
Գարուն է բերել այս ձմռան օրով
Եվ տուն է մտել կանաչ շորերով։
Ե՞րբ են նրա մոտ այսքան մանուկներ
Երգել ու պարել մինչև ուշ գիշեր։
Այնպես հպարտ է նայում աշխարհին,
Կարծես հենց ինքն է բերել Նոր տարին։

Իմաստի ընկալում՝

ՈՒղղորդող հարցերի միջոցով խրախուսենք երեխաներին՝ արտահայտել իրենց միտքը, պատմելու իրենց ցանկությունների մասին.

Դաստիարակը հարցնում է՝

-Ի՞նչ ցանկություններ եք ուզում հղել Ձմեռ պապին

-Ինչպե՞ս են մարդիկ պատրաստվում Ամանորին:

-Ինչպե՞ս ենք զարդարելու խմբասենյակը:

-Ի՞նչ տոնական երգեր ու բանաստեղծություններ եք սովորել:

Դաստիարակը կարճ պատմություն է հորինում այն մասին, թե ինչպես էր ինքը պատրաստվում Ամանորին և ինչ էր խնդրում Ձմեռ պապից, երբ փոքր էր: Հետո առաջարկում է երեխաներին նույն օրինակով պատմել իրենց ցանկությունների և տոնական նախապատրաստության մասին: Հարցնում ենք ՝2-3 երեխայի, մյուսները կարող են լրացնել և ասել իրենց ցանկությունների մասին: Այս տարիքային խմբում բավարար է, որ երեխաները կարողանան արտահայտել իրենց ցանկությունները, պատմել, թե ինչ բանաստեղծություններ գիտեն: Վերջում օգնում ենք, որպեսզի վերնագիր՝ հորինեն պատմության համար: Օրինակ՝ «Ուրախ Նոր տարի», «Ցանկություն՝ ուղղված Ձմեռ պապին», «Նվեր Ձմեռ պապից»: Ցանկալի է, որ Նոր տարվա հանդեսի օրը երեխաները Ձմեռ պապից ստանան իրենց երազած նվերները:

Երեխաներին ենք հանձնում ամանորյա խաղալիքներ, զարդարանքներ և առաջարկում զարդարել տոնածառը և խմբասենյակը ինքնուրույն՝ իրենց նախաձեռնողականությամբ, զարկ տալով ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Այնուհետև պատրաստում ենք բացիկներ մեր ցանկությունները Ձմեռ պապին փոխանցելուն համար , երեխաներին տալիս ենք գունավոր թղթեր ՝ ծալված վիճակում, յուղաներկեր և առաջանկում ենք բացիկի վրա նկարեն Ձմեռը իրենց պատկերացմամբ:

Կշռադատում

Պարապմունքը ամփոփում ենք եղևնու մասին հանելուկով.

Ամառ,ձմեռ կանաչ հագած՝

Անտառում մի ծառ է կանգնած,

Տրեմուտին թե տուն բերես,

Կզարդարի տոնահանդես։

Պարապմունքի ողջ ընթացքում կատարեցին դիտարկում՝

Միջին խմբի դաստիարակ՝ Լիլիթ Բաղալյանը.

<< - Պարապմունքը բավականին հագեցած և բովանդակալից էր։ Դաստիարակը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակին և նպաստել երեխաների ինքնուրույնությանը, նախաձեռնողականությանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը։ Պարապմունքի արդյունքում՝ երեխաները կարողացան ճանաչել բնության երևույթները, զարգացավ նրանց ստեղծագործելու ունակությունը, ինքնուրույն առաջնորդվելու կարողությունը։

Երեխաները պարապմունքի ընթացքում շատ ուրախ էին և հետաքրքրությամբ հետևում էին մատուցվող նյութին։

Դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է նախադպրոցական կրթության զարգացման մեջ։ Երեխաները նախադպրոցական տարիքում են ձեռք բերում աշխարհաճանաչողության կարևորագույն շատ տարրեր, ինչպիսիք են ՝ ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությանը։ Երեխայի ինքնուրույնությունը շատ կարևոր է, թե՛ ընտանիքում, թե՛ նախաուսումնական հաստատությունում իր կենցաղավարման համար։ Ինչպես նաև ստեղծագործական ունակությունների զարգացումը և նախաձեռնողականությունը։ >>

Տնօրեն ՝ Գոհար Հովհաննիսյանը.

<< - Դաստիարակ Գրետա Գրիգորյանը իր պարապմունքի ընթացքում իրականացրեց բավականին հետաքրքիր և ստեղծագործ աշխատանք։Պարապմունքի ընթացքում դաստիարակը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակին՝ բացահայտեց երեխաների ստեղծագործական երևակայությունը, նպաստեց ինքնակազմակերպմանը՝ իրականացնելով խմբասենյակի տոնական ձևավորում , որի ընթացքում երեխաները ցուցաբերեցին նախաձեռնողականություն։

Պարապմունքի ընթացքում երեխաները մեծ ոգևորությամբ մասնակցեցին խմբասենյակի տոնական ձևավորմանը, ինչպես նաև ինքնուրույն պատրաստեցին և նկարազարդեցին բացիկ՝ ուղղված Ձմեռ պապին։ Դրսևորեցին ակտիվություն, ներգրավվեցին խմբային աշխատանքում։ Դաստիարակի քաջալերող խոսքերի շնորհիվ երեխաները դրսևրեցին վստահություն սեփական ուժերի հանդեպ։

Հետազոտական թեմայի կարևորությունը նախադպրոցական կրթության մեջ շատ մեծ է։ Որպեսզի երեխաները կարողանան լինել ինքնուրույն և ստեղծագործ, հարկավոր է նրանց թողնել ազատ, չխանգարել նրանց ինքնադրսևորմանը անկաշկանդ լինելուն։>>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, աշխատանքի շուրջ կատարած հետազոտության արդյունքների ամփոփումը թույլ տվեց կատարել հետևյալ եզրակացությունը.

- Երեխաներն ավելի վաղ են սկսում ինքնուրույնության փորձեր անել: Այս դեպքում կարևոր է երեխայի աջակցելու փաստը, թե դաստիարակի կողմից, և թե ծնողի:
- Ինքնուրույնության և նախաձեռնողականության դաստիարակությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես է մեծահասակը ղեկավարում երեխայի գործունեությունը: Չի կարելի մեխանիկորեն վարժեցնել երեխայի ինքնուրույն գործելու ունակությունները: Նրա մեջ պետք է առաջացնել իր առջև ծառացած խնդիրները ինքնուրույն լուծելու ցանկություններ:
- Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից: Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է: Սակայն, բազմաթիվ հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել:

Այսպիսով, նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության և նախաձեռնողականության և ձևավորմանն ուղղված փորձարարական հետազոտության աշխատանքներից երևում է, որ մանկան գործունեության հիմնական ձևերում ճիշտ կազմակերպված մանկավարժական աշխատանքի արդյունքում կարող ենք հասնել զգալի արդյունքի

Գրականության ցանկ՝

1. Ա.Ա.Մարության, Ա.Մ.Դալլաքյան- նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008, էջ 35
2. https://hanragitak.com/%D5%A1%D6%86%D5%B8%D6%80%D5%AB%D5%A6%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/
3. https://lib.armedu.am/article/9253
4. https://bodylabvenera.ru/hy/church-holidays/vazhnost-razvitiya-tvorcheskih-sposobnostei-u-detei-razvitie/